

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատվությունը կրում է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Հայաստանի Հանրապետության ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Հայաստանի Հանրապետությունում բանկային գործունեությունը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

ԱՈՒԴԻՏՈՐ

/ Հ.Բակլաչյան/

Երևան, 13 ապրիլ, 2006թ.



ՏՆՕՐԵՆ

/ Ա. Փինարթաթ/

ԳՐԱՆՁ ԹՈՐՆԹՈՆ ԱՄԻՕ ՍՊԸ

ՀՀ, Երևան 375012
Վաղարշյան 8/1
Հ (374 10) 260 964 / 260 976 / 276 544
Ֆ (374 10) 260 961
Էլ gta@gta.am
Կ www.gta.am